ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սուսաննա Հակոբյանի և Ֆլորա Աթոյանի՝ Արաբական Միացյալ Էմիրություններ գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Սուսաննա Հակոբյան
Ֆլորա Աթոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ
ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ ք. Դուբայ

Սուսաննա Հակոբյան ՝ ս.թ. ապրիլի 30-մայիսի 5
Ֆլորա Աթոյան՝ ս.թ. ապրիլի 30-մայիսի 5

4. Հրավիրող կողմը՝ Arabian Travel Market 2023, Արաբական Միացյալ Էմիրություններ

5. Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Arabian Travel Market 2023 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին

6. Քննարկված թեմաները՝
Եվրոպայի և Պարսից ծոցի երկրների զբոսաշրջային ոլորտի պետական և մասնավոր ներկայացուցիչների հետ Հայաստանի՝ զբոսաշրջային թիրախային շուկաներում մարքեթինգային գործողությունների նախագծում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Մայիսի 1-ից 5-ը Arabian Travel Market 2023 ամենամյա զբոսաշրջային ցուցահանդեսին ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեն, պետական միասնական տաղավարի ներքո միավորելով Հայաստանի 13 զբոսաշրջային ընկերություններին ներկայացրեց երկրի զբոսաշրջային արդյունքները, ինչպես նաև նախագծեց թիրախային երկրների հետ համագործակցության հնարավորությունները:

Չորս օրերի ընթացքում Հայաստանի տաղավար այցելեցին Եվրոպայի, ԱՄՆ-ի, ԱՄԷ-ի, Հնդկաստանի, Իրանի զբոսաշրջային ոլորտի պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչներ՝ ծանոթանալու Հայաստանի զբոսաշրջային արդյունքների

բազմազանությանը, այդ թվում՝ արկածային, մշակութային, գաստրո, էնո զբոսաշրջությանը, երևանյան և մարզային փառատոներին և այլն:

Մայիսի 2-ին Հայաստանի տաղավար այցելեցին զբոսաշրջային ոլորտում գործող հայտնի հարթակների ներկայացուցիչներ՝Smart Guide, Whats' on, Ipremium, ինչպես նաև մի շարք աշխարհահռչակ ճամփորդական պարբերականներ միավորող մեդիա գրուպի ներկայացուցիչներ՝ քննարկելու հնարավոր համագործակցության հեռանկարները և Հայաստանի ճանաչելիության խթանումը միլիոնավոր օգտատեր ունեցող հարթակներում:

ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Սուսաննա Հակոբյանը հանդիպումներ ունեցավ Flynas ավիաընկերության ներկայացուցիչների հետ: Քննարկվեցին առաջիկայում բացվող Երևան-Ռիադ ուղիղ չվերթի, Սաուդյան Արաբիայում Հայաստանի ճանաչելիության բարձրացման և մեր երկրի հանդեպ զբոսաշրջային հետաքրքրության ձևավորման հետագա քայլերը:

Մայիսի 4-ին տեղի ունեցան հանդիպումներ Wizzair ավիաընկերության և Expedia հարթակի ներկայացուցիչների հետ: Հանդիպում տեղի ունեցավ նաև Իրաքի զբոսաշրջային ընկերությունների աշխատակիցների հետ, որի ընթացում քննարկվեցին հետագա հնարավոր համագործակցության եզրերը:

Ցուցահանդեսի առաջին երեք օրերի ընթացքում տաղավարում ներկայացվեց հայկական մշակույթը քանոնի երաժշտական կատարումներով և հայկական թեյի ու չրերի հյուրասիրությամբ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Պետական միասնական տաղավարի ներքո հանդես եկած մասնավոր հատվածի ներկայացուցիչները ձեռք բերեցին մի շարք պայմանավորվածություններ՝ խթանելու ներգնա զբոսաշրջությունը, ինչպես նաև ներկայացնելու Հայաստանի նոր զբոսաշրջային առաջարկները՝ վերոնշյալ երկրներից ավելի մեծ թվով զբոսաշրջիկներ ներգրավելու նպատակով:

Տեղի ունեցավ հանդիպում քննարկում Arabian Travel Market 2023 ցուցահանդեսի կազմակերպիչների հետ, որի ընթացքում քննարկվեց և նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց հաջորդ տարի Հայաստանի՝ ավելի մեծ տաղավարով նույնանման նպաստավոր կենտրոնական դիրքով ցուցահանդեսին մասնակցելու վերաբերյալ:

Ցուցահանդեսին մասնակցությունը կնպաստի Եվրոպայի, Պարսից Ծոցի երկրների հետ, մասնավորապես ԱՄԷ-ի հետ առավել արդյունավետ գործարար հարաբերությունների

զարգացմանը, ինչպես նաև Հայաստանը, որպես դեռևս չբացահայտված, նոր ուղղություն, համաշխարհային զբոսաշրջային քարտեզի վրա դիրքավորմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

ՍՈՒՍԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ՖԼՈՐԱ ԱԹՈՅԱՆ

11.05.23

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի
N 326-Ն որոշման

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար N 540-Կ հրաման
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝

Սուսաննա Հակոբյան- ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ

Ֆլորա Աթոյան- ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական

_____

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ Արաբական Միացյալ Էմիրություններ (Դուբայ)
5. Գործուղման ժամկետները՝ 2023 թվականի ապրիլի 30-ից մայիսի 5-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

_____

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Սուսաննա Հակոբյան	Ֆլորա Աթոյան	Ընդամենը (դրամ)
Ճանապարհի ածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս,բիզնես դաս)	էկոնոմ դաս	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)			
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, USD)		82.80	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	27,018	31,989	
	Օրերի քանակը	5	5	
	Ընդամենը (դրամ)	**140,090**	**159,949**	300,039
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, USD)			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը			
	Ընդամենը (դրամ)			
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար	30,000	37,000	**67,000**
	Այլ ծախսեր (նկարագրել)			
Ընդամենը ծախսեր (դրամ)		**170,090**	**196,949**	**367,039**

1 USD = 386.35

Գլխավոր քարտուղար
/Գլխավոր ֆինանսիստ/՝

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի
N 326-Ն որոշման

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար N 540-Կ հրաման
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝

Սուսաննա Հակոբյան- ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ

Ֆլորա Աթոյան- ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական

_____

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ Արաբական Միացյալ Էմիրություններ (Դուբայ)
5. Գործուղման ժամկետները՝ 2023 թվականի ապրիլի 30-ից մայիսի 5-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

_____

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Սուսաննա Հակոբյան	Ֆլորա Աթոյան	Ընդամենը (դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս,բիզնես դաս)	էկոնոմ դաս	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	237,335	237,335	474,670
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, USD)-60%	124.20	124.20	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	48,212	48,212	
	Օրերի քանակը	5	5	
	Ընդամենը (դրամ)	241,060	241,060	482,120
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, USD)	127	127	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	49,299	49,298	
	Օրերի քանակը	6	6	
	Ընդամենը (դրամ)	295,793	295,793	591,586
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			
	Այլ ծախսեր (նկարագրել)			
Ընդամենը ծախսեր (դրամ)		774,188	774,188	**1,548,376**

Գլխավոր քարտուղար
/Գլխավոր ֆինանսիստ/՝

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ